

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

Ձ Ի Ո Ի

ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1936

30 JAN 2018

ԽՍՅ ՆՈՂԺՈՂԿՈՄԱՏ

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

Ձ Ի Ո Ւ

ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ



ԳՅՈՒՂԼՄԱՏ

1936

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽՍՀՄ Հողագործության
Ժողովրդական համարի
տեղակալ՝ Ա. ՄՈՒՄԼՈՎ
30 հունվարի 1936 թ.,
Մոսկվա

ՋՐԱՀԱՆԳ՝ ՁԻՈՒ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՊՍԱՆԻԱՆ ԱՆՅԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԽՍՀՄ Կենսագործկոմի VII գումարման 2-րդ նստա-
քըջանի (հունվար 1936 թ.) վորոշման համաձայն, ձիերի
ընդհանուր թիվը 1936 թվի վերջին պետք է հասցնել
մինչև 17,1 միլիոնի:

2. Ձիերի աճն ընթանում է ավելի դանդաղ տեմ-
պերով, քան անասնապահական մյուս ճյուղերի աճը: Ձիու
վերարտադրության հետ միայլը բացատրվում է յերկու
մոմենտով, մի կողմից՝ դեռ գոյություն ունեցող այս կամ
այն տեղ ձևական վերաբերմունքով դեպի բեղմնավորման
համապանիայի անցկացումը, յերբ մայրերը ծածկվում են
մեկական անգամ, և վոչ թե մինչև հովտակից հրաժար-
վելը (ДО ОТБОЯ), մյուս կողմից՝ անբավարար, անփուլթ,
խսկ յերբեմն՝ ուղղակի հանցավոր վերաբերմունքով դեպի
հղի մայրերը, վորի հետևանքով մեծ տոկոսների յե հասնում
զամբիկների վիժումը:

3. Ձիաբուծության զարգացման պլանի հաջող կա-
տարումը կախված է, առաջին հերթին՝ ձիու բեղմնավորման
կամպանիայի ճիշտ անցկացումից և հղի զամբիկների
պահպանումից:

4. Համ կ(բ) կենսկոմի 1932 թ. մայիսի 27-ի վո-

Քարզմ. Ավետիս Ալանկերյան
Տեխ. իմր. Վ. Ալեքյան
Սրբազրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավիժոն լիազոր Ա Ս-4-507,
Պատվեր 330, հրատ. 343, տիրած 2000
Հանձնվել է արտադրութ. 15/VI 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 3/VI 1936 թ.



11-281389/բ

Քյուլգերատի տպարան, Յերևան, Նալբանդյան 41

բողոքով, ձիու բեղմնավորման կամպանիան իր նշանա-
կությամբ հավասարեցված է գարնանացանի կամպանիա-
յին: Այստեղից միանգամայն պարզ է, վոր նա պետք է
նույնպիսի ուշադրութեան արժանանա բոլոր կուսակցա-
կան և խորհրդային կազմակերպութիւնների կողմից,
ինչպես գարնանացանի կամպանիան:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեան ու խորհտնտեսու-
թեան խնդիրն է՝ այնպես կառուցել գարնանային գյուղա-
տնտեսական աշխատանքները, վորպեսզի նրանց անցկա-
ցումը խոչընդոտ չհանդիսանա բեղմնավորման պլանի հաջող
կատարմանը:

5. Համ Կ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ժեկո-ի 1933 թ. փե-
տրրվարի 10-ի վորոշման համաձայն, խորհտնտեսութիւն-
ներն ու կոլտնտեսութիւնները պարտավոր են բեղմնավոր-
ել բոլոր այն զամբիկներին, վորոնք պիտանի յեն սե-
բունդ տալու:

Մանրութիւն.— Սերունդ տարու համար վոչ պիտանի
համարվում են հետևյալ զամբիկները. ա) յերեք տարեկա-
նից ցածր հասակ ունեցողները. բ) յերեք տարին լրացած
բայց չձևավորված ու չզարգացածները. գ) այն զամբիկնե-
րը, վորոնց սեռական գործարանների ախտաբանական փո-
փոխութիւններն անհնարին են դարձնում նրանց հզա-
ցումն ու ծինը:

6. Յուրաքանչյուր կոլտնտեսութիւնում, մինչև բեղմ-
նավորման կամպանիայի սկսվելը, պետք է կատարված լի-
նեն հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

ա) զոտաեխինկական-անասնաբուժական պերտնայի
միջոցով զննված ու առանձնացված լինեն սերունդ տալու
համար պիտանի բոլոր զամբիկներն ու արտադրող հով-
տակները:

բ) արտադրական խորհրդակցութիւններում քննու-
թեան առնված լինի բեղմնավորման կամպանիայի պլանը:

գ) զամբիկների բեղմնավորման պլանը պետք է հասց-
ված լինի մինչև յուրաքանչյուր բրիգադ, իսկ բրիգադի
ներսում՝ մինչև ձիապանն ու զամբիկին աշխատեցնող կոլ-
տնտեսականը: Միաժամանակ պետք է ցույց տրված լինի,
թե վոր հովտակով զամբիկը պետք է ծածկվի:

դ) միջին գիրութիւնից ցածր բոլոր զամբիկները
պետք է ուժեղ կերակրվեն և, մինչև ձիու բեղմնավորման
կամպանիայի սկսվելը, հասցված լինեն միջին և լավ
գիրութեան:

ե) արտադրող հովտակները, բեղմնավորման կամպա-
նիան սկսվելուց $1\frac{1}{2}$ —2 ամիս առաջ, պետք է ուժեղ կերա-
կրվեն և հասցված լինեն լավ գիրութեան: Բոլոր արտադրող
հովտակների սերմնահյութը (сперма) պետք է հետազոտ-
ված լինի և կազմակերպված լինի սերմնահյութի կանոնա-
վոր ստուգում՝ բեղմնավորման սեզոնում, վոչ պակաս
ամիսը մեկ անգամ:

զ) հովտակների համար առանձնացված և բրոնիայի
յենթարկված լինեն պահանջվող քանակութեամբ խտացրած
և կոպիտ կերեր՝ բեղմնավորման անամբողջ ժամանակաշրջանի
համար:

է) հովտակներով ապահովված չլինելու դեպքում
պետք է հայտներկայացված լինի շրջնորբաժին և պետա-
կան բուժարանային ախոռին (ГЭК):

ը) բոլոր առանձնացված զամբիկները պետք է
ընտրված ու ամբացված լինեն վորոշ հովտակներին:

թ) պետք է նախապատրաստված լինեն հովտակ-
ների համար համապատասխան շենքեր:

ժ) բեղմնակայանների վարիչներն ու ձիապանները
պետք է ավարտած լինեն կարճատև դասընթացներ:

ժա) պետք է ստացված լինեն հողբաժնոււմ բեղմնավորման կամպանիայի մասին հաշվառման և հաշվետվութեան ձևերը.

7. Ձիու բեղմնավորման կամպանիան, զարնանացանի կամպանիային ճիշտ կերպով կապակցելու հետ միասին, հղիութեան ամենաբարձր տոկոս ու բարեհաջող ծին ստանալու հիմնական պայմաններն են հանդիսանում.

ա) արտադրող հովտակների ճիշտ կերակրումը, խնամքը և ոգտագործումը.

բ) իր ժամանակին զամբիկների ստուգումն ու բեղմնավորումը.

գ) բեղմնավորված զամբիկների ճիշտ կերակումը և ոգտագործումը.

դ) բեղմնավորմանը մասնակցող մայրական կազմի ու արտադրող հովտակների պարտադիր անասնաբուժական-սանիտարական զննման (ОСМОТР) լավ կազմակերպումը.

ե) զամբիկների ստուգումներն ու բեղմնավորումները կանոնավոր զրանցելը:

8. Բեղմնակայանների վարիչները, ձիաբուժական ապրանքային ֆերմաների (ՉՍՖ) վարիչները, կոլտնտեսութունների նախագահները պետք է լավ ծանոթ լինեն ինչպես արտադրող հովտակների ու զամբիկների խնամքի, պահպանման և ոգտագործման կանոններին, այնպես էլ բեղմնավորման տեխնիկայի անցկացման հետ: Ձիապաններն ու զամբիկ աշխատեցնող կոլտնտեսականները պետք է լավ ծանոթ լինեն զամբիկների խնամքի, պահպանման և ոգտագործման կանոններին (ԽՍՀՄ ՀՖԿ Ձիաբուժական գլխավոր վարչութեան հրահանգները՝ բեղմնավորման կամպանիայի

բարելավող հովտակների պահպանման և ոգտագործման, մատղաշ ձիերի դաստիարակման ու աճեցման մասին):

9. Բեղմնակայանը կազմակերպվում է կոլտնտեսութեան վարչութեանը կից: Յեթե բրիգադն աշխատում է բեղմնակայանից 10 և ավելի կիլոմետր հեռու, այդ դեպքում բեղմնակայանը կազմակերպվում է բրիգադին կից, առանձնացնելով հատուկ արտադրող:

10. Յեթե բրիգադում, վորին ամրացված է հովտակը, չեն լինի բավականաչափ մայրեր և հովտակը չի ունենա լրիվ բեռնվածութուն, այդ դեպքում հովտակին ամրացվում են մի քանի բրիգադների մայրեր:

11. Ձիու բեղմնավորման կամպանիայի պլանի իր ժամանակին և բարձրորակ կատարման համար պատասխանատու յեն.

ա) կոլտնտեսութեան նախագահը՝ կոլտնտեսութեան ամբողջ պլանի կատարման համար.

բ) ՉԱՖ-ի վարիչը՝ զամբիկների ու հովտակների նախապատրաստման և բեղմնավորման կամպանիայի անցկացումը կազմակերպելու համար.

գ) բեղմնակայանի վարիչը՝ կայանի կողմից պլանի կատարման, հովտակների լավ վիճակի, զամբիկներին տեխնիկապես ճիշտ ծածկելու, հաշվետվութեան և բեղմնավորման ցուցակները ճիշտ լրացնելու համար:

դ) բրիգադի բրիգադները՝ պլանի կատարմանը բրիգադում և իր ժամանակին մայրերի ազատմանը՝ բեղմնակայան ուղարկելու համար.

ե) ձիապանը՝ բեղմնակայանին ամրացված մայրերի ցանկութունն իր ժամանակին հաշտաբերելու, բեղմնակայան ուղարկելու և ծածկելու՝ մինչև հովտակից հրաժարվելու՝ համար.

զ) զամբիկին բանեցնող կոլտնտեսականը՝ իր ժամանակին զամբիկի ցանկութունը հայտաբերելու և բեղմնակայան ուղարկելու համար:

12. Մասսայական բեղմնավորման շրջանը ստանանվում է մոտավորապես մարտի 1-ից մինչև ոգոստոսի 15-ը: Նույժ տեղի կլիմայական պայմաններին՝ բեղմնավորման շրջանի սկիզբը կարող է փոփոխվել այս կամ այն կողմը:

ՀՈՎՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ՅԵՎ ԸՍՏ ԲԵԴՄՆԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԲԱՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Մինչև բեղմնավորման կամպանիայի սկսվելը, բոլոր հովտակները պետք է զննված լինեն զոո-անասնաբուժական պերսոնալի կողմից և լավագույնները նրանցից պետք է առանձնացված լինեն բեղմնավորման կամպանիայի համար:

14. Բոլոր առանձնացված արտադրող հովտակները բաժանվում են յերկու կարգի: Առաջին կարգին պատկանում են տվյալ շրջանի համար պլանային ցեղերից այն աղնրվացնող հովտակները, վորոնք համապատասխանում են շրջ. տոհմային գրքի ստանդարտին, յերկրորդ կարգին պատկանում են մնացած բոլոր արտադրողները:

15. Բեղմնակայաններում նշանակված հովտակները սորտային ու ցեղային տեսակետից պետք է համապատասխանեն բեղմնակայանին ամրացված մայրերի վորակային ու ցեղային կազմին:

Որինակ՝ պերշերոնյան արյունով զամբիկները պետք է ծածկվեն պերշերոն հովտակներով, բրաբանսոնյան արյունովը՝ բրաբանսոններով:

Տեղական ցեղերի հեծյալ տեսակի մայրերը, վորոնք նախատեսված չեն իր մեջ բուծվելու, պետք է ծածկվեն՝

անդլիական արյուն ունեցող՝ Դոնի և Սխալ-թեքելի հովտակներով: Կուլտուրական հեծյալ տեսակի արյան ներարկում (прилитие крови) ունեցող զամբիկները պետք է ծածկվեն արյունակցութունը բարձրացնող հովտակներով:

16. Սպասվող սերնդի վորակն ու արյունակցութունը բարձրացնելու համար, բեղմնակայաններում արտադրող հովտակներն ինչպես իրենց եքստերյերով, նույնպես և ըստ ցեղականության ու արյունակցության աստիճանի, պետք է ավելի բարձր լինեն քան զամբիկները:

17. Հովտակների համար զամբիկներ ընտրելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ կանոններով:

ա) խուսափել միատեսակ եքստերյերային պակասություններ ունեցող հովտակի ու զամբիկի բեղմնավորումից. որինակ, կախ ընկած մեջք (վոչ ծերությունից) ունեցող հովտակով չբեղմնավորել նույնպիսի պակասություն ունեցող զամբիկի:

բ) Թույլ չտալ բարձր արյունակցություն ունեցող զամբիկների բեղմնավորումը վոչ ցեղային կամ արյունակցության պակաս աստիճան ունեցող հովտակների հետ (որինակ՝ $\frac{3}{4}$ արյուն ունեցող զամբիկը չպետք է ծածկվի կիսարյուն հովտակով, կամ կիսարյուն զամբիկը՝ վոչ ցեղային հովտակով, և այլն):

գ) բեղմնավորել լավագույն մայրերը լավագույն հովտակներով, ամրացնելով սերնդի մեջ նրանց ոգտակար հատկությունները:

18. Հովտակին բեղմնակայան նշանակելիս պետք է հառուկ ուշադրություն դարձնել, վորպեսզի նա արատներ չունենա, վորոնք կարող են փոխանցվել ժառանգաբար (курба, жабка—վերջավորությունների պակասություններ, свистящее удушье—շնչանեղձություն և այլն):

19. Յուրաքանչյուր կոլտնտեսություն, վորն ունի 20

և ավելի ժայրեր, պետք է կազմակերպի իր բեղմնակայանը հետևյալ քանակի հովտակներով. ձեռնաքաշ զուգավորման դեպքում յուրաքանչյուրին 30—40 զամբիկ, իսկ յերամակային զուգավորման դեպքում՝ 20—25:

ՑԵՆԲԸ ՅԵՎ ՀՈՎՏԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ

20. Բեղմնակայանում հովտակի համար առանձնացված շենքը պետք է լավ պաշտպանված լինի անձրևից և փոխանցիկ քամուց, չոր, բավականաչափ լուսավոր տարածությամբ (վոչ պակաս հատակի տարածության $1/12$ -ից), հնարավոր չափով պետք է մեկուսացված լինի մյուս ձիերից, անասունների/ այլ տեսակներից ու թռչուններից:

21. Վորպես կանոն, հովտակներին անհրաժեշտ է պահել դեհնիկներում (կտրված տեղեր)՝ ազատ, առանց կապելու: Դեհնիկի չափը պետք է լինի վոչ պակաս 3,2 մ յերկարությամբ, 3,2 մ լայնությամբ և 3,5 մ բարձրությամբ: Դեհնիկներում անհրաժեշտ է կառուցել այնպիսի դուռ, վորպեսզի հովտակը կարողանա ազատ անցնել, առանց գլուխը կոացնելու (լայնքը 1,2 մ, իսկ բարձրությունը՝ 2,8 մ, մոտավոր չափով):

Դեհնիկներում ցանկալի չէ, վոր հատակները լինեն ամրացրած կավից (глинобитные) լավ կոխ տված, հարթ և առանց փոսերի:

22. Հովտակների շենքը պետք է պահվի մաքուր և հաճախակի ողափոխվի: Աղբն ու թաց ցամաքը պետք է ամեն որ հեռացնել:

Դեհնիկներում և միջանցքներում, բացի մսուրներից, կողմնակի իրեր չպետք է լինեն (ճաղեր, ավելորդ մսուր և այլն):

Ցանկալի չէ դեհնիկներում կախովի ժուլոններ ունենալ:

23. Բեղմնակայաններում հովտակների կերակրումը պետք է լինի անհատական՝ հետևյալ որինակելի կերաբաժիններով (կիլոգրամներով):

| Կերերի անունները | Հեծյալ, վար- զունների և մանր ծան- բաքարչերի համար | Մոլոր ծան- բաքարչերի համար |
|--|---|----------------------------------|
| Ստացրած կերեր (վարսակ, գարի, յեզիպաացորեն, թեփեր) | 5—7 կգ | 6—9 կգ |
| Սոս | 6—8 » | 8—10» |

24. Անասնի կերն արտադրող հովտակների համար պետք է լինի լավ վորակի—վարսակը՝ չոր, առանց վտա հոտի, մաքուր, խոտը՝ առանց բորբոսի, իր ժամանակին հավաքված և բարձր վորակի. ցամաքի համար պետք է ոգտագործել ծղոտ, մասամբ փոխարինելով այն, վորաեղ հնարավոր է, տորֆով կամ փայտի թեփով:

25. Ամեն որ, սահմանված ժամերին, հովտակին պետք է մաքրել խոզանակով կամ վոլորած ծղոտով (жгутот), իսկ սմբակները լվանալ և հետո չորացնել:

26. Հովտակների համար պետք է սահմանված լինի ամենորյա զրոսանք՝ կամ բաց թողնել ցանկապատած արհեստական արոտում, հեծնել 35—40 ըոպե, մինչև թեթև քրտնելը:

27. Անհրաժեշտ է հովտակների հետ վերաբերվել ուշադիր՝ չծեծել, նրանց չբռնել, վրան չբռնել, և այլն: Բեղմնավորման կամ պանիայի ամբողջ շրջանում հովտակի 4 վորքն էլ պետք է լինեն առանց պայտի:

28. Անհրաժեշտ է վոչ պակաս ամիսը մեկ անգամ մաքրել հովտակների սմբակները (հավասարեցնել), այնել ձեռքի վրա, բացառիկ դեպքերում մտցնել դազգյանի մեջ (в станок):

29. Յուրաքանչյուր բեղմնակայանում պետք է սահմանված լինի որվա հաստատուն կարգուկանոն: Վորպես որինակ, կարելի լի գեկավարվել հետևյալով.

| ժամեր | Աշխատանքի տեսակը |
|------------------------------------|---|
| 5-6 | Ջրումը: Առաջին անգամը կերակրել գարով և խոտով: Դեմնիկների մաքրումը: |
| 6-8 | Հովտակների մաքրումը՝ զրոսանքի հանելուց առաջ: Հովտակի զրոսանքը: |
| 8 ¹ / ₂ -9 | Բեղմնավորումը: Բեղմնավորումից հետո հովտակին ման ածելը: Խոտով կերակրելը: |
| 10-11 ¹ / ₂ | Հովտակների թիմարը և շենքի մաքրումը: |
| 11 ¹ / ₂ -12 | Ջրումը: Կերակրումը՝ թեփով, գարով և խոտով: |
| 17-18 | Չամբիկների բեղմնավորումը հովտակներով, վորոնց թույլ և տրված Ջ-րդ անգամ ծածկելու կամ լեթե առավորության զուգավորում չի կատարված: |
| 18-18 ¹ / ₂ | Հովտակների թիմարը և շենքի մաքրումը: |
| 18 ¹ / ₂ -19 | Ջրումը: Կերակրում՝ գարով և խոտով: |
| 24 | Դիչերապահի կողմից խոտով կերակրելը: |

Ընդունված ներքին կարգուկանոնը պետք է քննարկված լինի կոլտնտեսականների ընդհանուր արտադրական խորհրդակցությունում և պետք է ճիշտ կիրառվի կլանքում այն հաշվով, վորպեսզի հովտակին իզուր չանհանգրստացնեն և սահմանված սեփիւը չխախտվի:

ՀՈՎՏԱԿՆԵՐԻ ԱՊՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

30. Յուրաքանչյուր մեծահասակ (4 տարեկան և մեծ) քարեխավող հովտակ նորմալ և առողջ վիճակում խնամքի համապատասխան կանոնները կիրառելիս պետք է

ծածկի՝ ձեռնաքաշ բեղմնավորման դեպքում՝ վոչ պակաս 50 մայր. ծածկումների (сажок) քանակը կամպանիայի ընթացքում չպետք է գերազանցի 175-ից:

Առաջին տարին բեղմնավորող 3 տարեկան յերիտասարդ հովտակի բեռնվածությունը պետք է լինի 15-30 մայր. ծածկումների քանակը կամպանիայի ընթացքում չպետք է գերազանցի 75-ից:

Մեր հովտակների բեռնվածության չափերը, նայած նրանց առողջության վիճակին և անհատական առանձնահատկություններին, կարող են իջեցված լինել մինչև 20-30 զամբիկի:

31. Բուրրովին առողջ հովտակը ձեռնաքաշ բեղմնավորման դեպքում որական կարող է 2 անգամ ծածկել, վոչ պակաս 10 ժամվա ընդմիջումով: Յերեք տարեկան յերիտասարդ հովտակների համար, վորոնք առաջին տարին են զուգավորում, սահմանվում է որական մեկ ծածկում:

Յուրաքանչյուր տասնորրյակում հովտակը մեկ որ պետք է ազատ լինի բեղմնավորումից:

32. Խմբային (КОСЯЧНАЯ) զուգավորման դեպքում մեծահասակ հովտակներին սահմանվում է 2 մայր, իսկ յերիտասարդներին ու ծերերին՝ 12-15 մայր:

33. Արհեստական սերմնավորման դեպքում հովտակի բեռնվածությունը սահմանվում է 150 մայր:

34. Կոլտնտեսությունների յուրաքանչյուր հովտակի բեռնվածությունը սահմանվում է շրջանային զոտեխանիկական հանձնաժողովի կողմից, վորպիսին կատարում է այդ աշխատանքը բեղմնավորման կամպանիային նախապատրաստվելու ժամանակ, իսկ պետական բուժարանային ախոռի (ГЭК) հովտակների համար՝ ախոռի վարչության և անասնաբուժական պերսոնալի կողմից:

Մահմանված բեռնվածությունը հաստատվում է վերոհիշյալ հանձնաժողովների կողմից, համապատասխան ակտերով:

Մինչև բեղմնավորման կամպանիայի վերջնալը, իրենց լրիվ բեռնվածությունը կատարած հովտակների բեռնվածությունն անասնաբուժական պերսոնալի քննությամբ կարելի չե ավելացնել մինչև 60—70 զամբիկի, նայած հովտակի առողջությանը, գիրությանը և կատարած ծածկումների քանակին:

Բեռնվածության ավելացումը կատարվում է զոռանասնաբուժական պերսոնալի հետ համաձայնեցնելուց հետո:

ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ

35. Չեռնաքաչ բեղմնավորման նախատեսված զամբիկների ցանկությունն ավելի ճիշտ վորոշելու համար նրանց ստուգումը կատարվում է հատուկ փորձող հովտակով (жеребцом-пробником), վորն առանձնացվում է կուտնտեսության կողմից՝ բանվոր ձիերի կազմի հովտակներից: Փորձող հովտակն առանձնացնելիս հատուկ լուրջ ուշադրություն դարձնել այն բանի վրա, վորպեսզի փորձողը գերծ լինի բոլոր տեսակի վարակիչ հիվանդություններից:

36. Ստուգում են զամբիկներին կամ, ա) ձեռքի միջոցով, յերբ յերկու ձիապան բռնում են (պայտերը հանված) փորձողին յերկար սանձապարաններից (поводья) և մտեցնում են հետևի վոտքերի պայտերը հանված զամբիկին, կամ թե, բ) փակոցի միջոցով (через барьер), յերբ փորձողին կանգնեցնում են փակոցի մի կողմը, վոր կառուցվում է յերկու սյունների միջև գտնվող ողերի վրա, և վորը փաթաթվում է ծղոտե խսիրով, կամ թաղիքով (փակոցի յերկարությունը՝ $2\frac{1}{2}$ մետր, բարձրությունը՝ 1 մետր), իսկ

մյուս կողմից մտեցնում են զամբիկին: Օերկու դեպքումն էլ փորձողին սկզբում թույլ են տալիս հոտ քաշելու զամբիկի գլխից և հետո՝ յեթե նա թույլ է տալիս, առտիճանաբար մտեցնել աճուկին ու յետքին:

Մանորություն.—Փորձող հովտակն ամբողջ շրջանում պետք է լինի առանց պայտերի:

37. Ստուգումն ու բեղմնավորումը կազմակերպել այնպես, վոր մայրերը չկտրվեն գյուղատնտեսական աշխատանքներից: Ամեն որ առավոտյան, մինչև աշխատանքների սկսվելը, յերեկոյան՝ աշխատանքներից հետո և ճաշվա ընդմիջումին, բեղմնակայանի վարիչը կամ ձիապանը փորձող հովտակին նստած՝ շրջագայում են բրիգադները, վորոնց ամրացված են բեղմնավորման համար նախատեսված զամբիկները, և ստուգումը կատարում են մայրերի գտնված տեղում: Մայրերի ստուգման նույնպիսի ձևը պետք է կիրառվի և այն կուտնտեսություններում, վորոնք չունեն իրենց բեղմնավորման կայանը, սակայն ամրացվել են այս կամ այն կուտնտեսության բեղմնակայանին: Անհատ տնտեսություններն իրենց զամբիկներին ստուգելու համար պետք է տանեն բեղմնակայան. յեթե մայրը ցանկություն է հայտնում, ապա ծածկվում է նա նույն այդ օրը:

38. Ցանկություն հայտնող զամբիկներն անհանգիստ են լինում, կորցնում են ախորժակը, նրանց հեշտոցի լորձնաթաղանթն ուռչում է, հաճախակի միզում են, բարձրացնում են պոչը, նայում են ձիերին, և այլն:

Ստուգվելիս զամբիկը թարթում է մերքը (мигает петлей), ծորում է նրա միջից դեղնափուն պղտոր լորձուք և հանգիստ կանգնում է, ցույց տալով զուգավորվելու լրիվ ցանկություն:

Յեթե ստուգվելիս զամբիկը չի հայտարարում մատնանշված նշանները՝ անհանդիստ ե կանգնած, պտտում ե պոչը, չարանում ե, աքացի յե տալիս, ապա ուրեմն դա ցույց ե տալիս, վոր նա ցանկությունն չունի:

39. Չհղիացած զամբիկները պետք ե ստուգվեն ամեն որ՝ բեղմնավորման կամպանիայի սկզբից: Մնած զամբիկների ստուգումն սկսվում ե 5-րդ որից՝ ծնելուց հետո, և շարունակվում ե ամեն որ, մինչև ցանկության գալը: Չամբիկները ծածկվում են լրիվ ցանկությունն հայտարարելիս:

Հերթի նշանակված զամբիկներն ստուգվում են և բեղմնավորվում են առաջին հերթին:

40. Ցանկության լեկած զամբիկները ծածկվում են ցբեղմնակայանում 2-րդ որը, ցանկությունը հայտարարելու որ հաշվելով առաջին որը:

Հետո ստուգվում են 5, 8 և 11-րդ որը, հաշվելով ցանկությունն հայտարարելու որից և ցանկության զեպքում ծածկվում են նույն այդ որերում:

5-րդ կամ 8 րդ որը հովտակից հրաժարվող մայրերին նորից նշանակում են ստուգում միայն 15-րդ որը, առաջին ցանկության հայտարարման որից:

Մանրորյուն.— 11-րդ որը ծածկված մայրերը, յեթե ցանկությունն են հայտարարում և 15-րդ որը, այդ զեպքում չեն ծածկվում, այլ ուղարկվում են նախնական անասնաբուժական զննման:

Ուրեմն.— Մայրը ցանկության ե յեկել ապրիլի 23-ին, ծածկվում ե ապրիլի 24-ին: Յերկրորդ ստուգումը կատարվում ե ապրիլի 27-ին, և ցանկության զեպքում մայրը ծածկվում ե նույն այդ որը: Յերրորդ ստուգումը կատարվում ե ապրիլի 30-ին, և ցանկության զեպքում ծածկվում ե նույն այդ որը: Հետո

11-28/389

զամբիկն ստուգվում ե մայիսի 3-ին և ցանկության զեպքում ծածկվում ե նույն այդ որը:

41. Յեթե մայրը հրաժարվել ե հովտակից 15-րդ որը, ապա ստուգումը կատարվում ե մեկ որից հետո, իսկ այն զամբիկը, վոր ծածկվել ե 15-րդ որը, ստուգվում ե ինչպես ցանկության առաջին որից հետո, պահպանելով վերևում ցույց տված կարգը:

Վերջին բեղմնավորումից սկսած 35—40 որվա ընթացքում հովտակից հրաժարված մայրը համարվում ե պայմանական հղի:

42. Յեթե մեկ որում ցանկությունն են հայտարարում մի քանի զամբիկներ, վորոնք ամրացված են միևնույն հովտակին, ապա առաջին հերթին ծածկվում են ծնած, ծծմայր զամբիկները, վորոնք գտնվում են ցանկության առաջին շրջանում:

43. Չեռնաքաշ բեղմնավորումն անցկացնելու համար պետք ե առանձնացված լինի միանգամայն խուլ, հարթ, ցեխից, աղբից, խճից, ապակուց և այլն ազատ տեղ:

Լավ լեղանակին բեղմնավորումը կարելի յե անցկացնել բացոթյա, իսկ աննպաստ և ցուրտ լեղանակին՝ լավ պաշտպանված ու ծածկված բակում:

44. Չուղարկման ժամանակ պետք ե պահպանել լուրթյուն և հանգստություն, վորպեսզի խոսակցությունից և աղմուկից հովտակը չվախենա և գործից չչեղվի: Այդ ժամանակ կողմնակի մարդկանց ներկայությունն արգելվում ե:

45. Յեթե զամբիկը ցածր լինի հովտակից, ապա անհրաժեշտ ե թումբ անել այն հաշվով, վորպեսզի զամբիկի բարձրությունը հավասարվի հովտակի բարձրությանը:

46. Բեղմնավորելիս զամբիկները հետևի վտոքերն անպայման պետք ե պայտահանվեն:



Հովտակի վիրավորումը գամբիկից կանխելու նպատակով՝ վերջինին բեղմնավորումից առաջ անհրաժեշտ է հագցնել բեղմնավորման անուր (Шлейка):

Հովտակի արվանդամը մազով վիրավորվելուց խուսափելու համար, բեղմնավորումից առաջ գամբիկի պոչը պոչարմատից մինչև կեսը պետք է փաթաթված լինի բինտով և ծածկվելու ժամանակ քաշված լինի մեկ կողմի վրա:

Յեթե նկատվում է, վոր հովտակը բեղմնավորելիս կրճում է գամբիկին, այդ դեպքում գամբիկի վիզը պետք է ծածկել թաղիքով կամ ծածկոցով:

47. Նախքան ծածկելը, բեղմնավորման պատրաստված գամբիկը պետք է կանգնած լինի բեղմնավորման համար հատկացված տեղում: Հովտակին յերկու յերկար սանձապարանից բռնած մոտեցնում են գամբիկին և նախապատրաստված՝ մինչև լրիվ երեկցիայի (արվանդամի գրգռվելը) սկսվելը՝ թողնում են պատրաստված գամբիկի վրա:

Հովտակի ծածկելու ժամանակ անհրաժեշտ է վեր բարձրացնել գամբիկի գլուխը և այդպիսով դժվարացնել հովտակին աքացելու հնարավորությունը: Հովտակի ուժեղ ճնշման դեպքում անհրաժեշտ է գամբիկին պահել ուսով՝ կրծքի տակից. հովտակին չպետք է թույլ տալ միանգամից հարձակվելու գամբիկի վրա և բարձրանալու կողքից. սկզբում պետք է թույլ տալ հոտոտելու գամբիկի գլուխը, կողքերը, աճուկը և այն ժամանակ միայն թողնել, վոր ծածկի:

48. Ձեռնաքաշ գուգավորման ժամանակ հովտակի արվանդամն ուղղվում է ձեռքով: Բեղմնավորումից առաջ ձիապանի ձեռքերը պետք է լինեն միշտ մաքուր, յեղունգները կտրված: Յերբ հովտակը գամբիկի վրա չէ բարձրա-

նում, սանձապարանները պետք է թուլացնել և ազատութուն տալ գամբիկին, պահպանելով նրան նրա համար, վորպեսզի հանգիստ կանգնի հովտակի տակ:

49. Հովտակը պետք է մնա գամբիկի վրա մինչև սերմնահյուսթի լրիվ արտադրելը (վորը վորոշվում է հովտակի պոչի թեթև շարժումից՝ վերևից-ներքև) և արվանդամի գուրս ընկնելով հեշտոցից:

Ծածկելուց հետո հովտակի արվանդամն պոչուցորեն լվացվում է մաքուր գու ջրով:

50. Յեթե ծածկումն ինչ-ինչ պատճառով չհաջողվեց, այդ դեպքում անհրաժեշտ է հովտակին ման ածել 15—20 րոպե, վորից հետո բեղմնավորումը կրկնել: Բեղմնավորումից հետո հովտակին չպետք է ուղիղ տանել շենքը, այլ պետք է ման ածել մոտավորպես 20 րոպե. ընդվորում շենքը մտցնելուց հետո լավ շփել ծղոտով մինչև չորանալը, շփել յետեր, գավակը, վորքերը և այլն, վորից հետո միայն կանգնեցնել իր տեղում:

Յուրա յեղանակին հովտակին ման ածել ծածկոցով:

51. Յերբ գամբիկը մտրուկի (բուռակի) հետ է և բեղմնավորման ժամանակ հնարավոր չէ բաժանել, այդ դեպքում նրան պետք է պահել մոր աչքի առաջ և ազատել նրան հովտակին հեռացնելուց հետո:

52. Ցանկապատի մեջ ազատ բեղմնավորման (приварковой случае) դեպքում գամբիկների ստուգումը կարող է և չկատարվել. այդ ձևի բեղմնավորման համար նշանակված բոլոր մայրերին քշում են ցանկապատի մեջ (в варок) և դրանից հետո բաց են թողնում գամբիկներին ծածկելու համար նախատեսված հովտակին: Արտադրողն

ինքն և փնտռում տվյալ մոմենտում ցանկությունն հայտնող զամբիկներին և ծածկում ե իր ընտրութեամբ: Նման բեղմնավորման համար նախատեսված հովտակին կարելի չե թույլ տալ որական յերկու անգամ ծածկելու կամ միևնույն մորը կամ թե յերկու տարբեր մայրերի:

Բեղմնավորումն ավարտելուց հետո հովտակին տանում են շենքը, իսկ մայրերին բաց են թողնում արոտ:

Հովտակին ցանկապատում (в варке) բռնելու համար, բաց են թողնում նրան պախուցով (նոխտայով):

53. Խմբային բեղմնավորումը (КОСЯЧНАЯ СЛУЧКА) հովտակի կողմից կատարվում ե նրա համար նախատեսված խմբում՝ ինքնուրյուն, առանց կողմնակի ոգնութեան: Մինչև բեղմնավորման կամ գանձի վերջանալը գամբիկների խմբերից (из косяков), վորպես կանոն, մայրերը չեն վերցվում, բացառությամբ հիվանդութեան դեպքերից:

Խմբի մեջ նոր մայրեր կարելի չե ավելացնել միայն մեծ անհրաժեշտության դեպքում: Այդ դեպքում լավ ե հովտակին վերցնել ցանկապատի (в варок) մեջ և պահել նրան խմբի մեջ նախատեսված նոր մոր հետ: Յերբ նրանք կրնտեանան իրար հետ, նրանց բաց են թողնում խմբի մեջ:

54. Ինչպես մայրերին, նույնպես և հովտակներին խմբից վերցնելը՝ մինչև բեղմնավորման շրջանի ավարտելը, կարելի չե միայն բացառիկ դեպքերում (հիվանդութեաններ և այլն):

Հովտակին արոտում պետք ե սովորեցնել լրացուցիչ կերակրման ստալրակից, իսկ ցերեկվա շոգին — շենքում: Վերջին միջոցը խորհուրդ ե տրվում միայն այն հովտակների համար, վորոնք խմբից առանձնացվելիս չեն չարանում:

55. Խմբային բեղմնավորման մեջ նախապես աշխատող հովտակները բաց են թողնվում խմբի մեջ այս կերպ: ալդ հովտակի համար նախատեսված մայրերը խմբավորվում են բաց տեղում և նրանց մոտ ե թողնվում արտադրողը, սպասելով մի առ ժամանակ, մինչև մայրերը, հատկապես փոքրիկ մարուկներ ունեցող ծծմայրերը հանգրստանան, հետո խումբը յերամակավարի (ձիարածի) հսկողութեամբ ջշվում ե նախատեսված արոտ:

56. Յերիտասարդ հովտակը, վոր դեռ չի բեղմնավորել, խմբի մեջ բաց ե թողնվում այս կերպ: հովտակի համար նախատեսված գամբիկներին ջշում են ցանկապատի մեջ: նրանցից ընտրում են մեկ մայր, վորը տվյալ մոմենտում ունի բացահայտ ցանկութուն, և ծածկում են նրան ձեռնաքաշ: Այդ դեպքում ցանկալի չե խուսափել արտադրողին վորևե ոգնություն հասցնելուց (բռնելը, արվանդամին վորևե ոգնություն տալը և այլն): Յերբ հովտակը լրիվ ընտելացել ե խմբին և կարող ե մեկ անգամ ևս ինքնուրույն կերպով ծածկել, ուրեմն՝ խումբը յերամակավարի հսկողութեամբ կարելի չե ջշել արոտ:

57. Խմբային բեղմնավորման մեջ չեղած, բայց ձեռնաքաշ բեղմնավորման մեջ առաջուց արգեն ոգտագործված հովտակին բաց են թողնում խմբի մեջ այնպես, ինչպես յերիտասարդին:

Տարբերությունը միայն այն ե, վոր չափից ավելի դյուրագրգիռ և տեմպերամենտ ունեցող հովտակներին համար, առաջի ծածկումից վորոշ ժամանակ անց (ցանկապատում, ուր ջշված են նրա համար նախատեսված մայրերը), առանց հովտակին տանելու, կրկնում են ծածկումը նույն այդ գամբիկի վրա, վորից հետո խումբը ջշվում ե արոտ:

ԱՆԱՍՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՍԱՆՏԱՐԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

58. Յուրաքանչյուր բեղմնակայան պետք է գտնվի անասնաբուժական պերսոնալի (անասնաբուժի, անասնաբուժակի) մշտական հսկողություն տակ:

59. Բոլոր կոլտնտեսությունները, բեղմնավորման կամ պանիայից առաջ պետք է կանչեն անասնաբուժական պերսոնալին զննելու բեղմնավորման համար նախատեսված զամբիկներին և հովտակներին, հատուկ ուշադրություն դարձնելով բեղմնավորման հիվանդության (подсёдал) ու վարակիչ վիժման վրա: Անասնաբուժական զննման յենթակա յեն նույնպես բեղմնակայաններին ամրացված՝ մենատնտեսների զամբիկները: Մայրերը պետք է ընդունվեն բեղմնակայան անասնաբուժական զննման տեղեկանքներով:

60. Բեղմնավորմանը թույլատրվում են միայն առողջ հովտակներն ու զամբիկները: Բեղմնավորմանը չեն թույլատրվում գերհոգնածության խիստ նշաններով զամբիկները:

Յուրաքանչյուր բեղմնավորումից առաջ ինչպես հովտակները, նույնպես և զամբիկները պետք է զննվեն անասնաբուժի կամ անասնաբուժակի կողմից, իսկ նրանց չլինելու դեպքում՝ բեղմնակայանի վարիչի կամ սանիտարի կողմից:

61. Յենթե հովտակի արվանդամի վրա յերևան պզուկներ, վերքեր կամ ամոռապարկի վրա ուռուցք, այդ դեպքում, առանց անասնաբուժական պերսոնալի թույլտվության, բեղմնավորման չեն թույլատրվում:

62. Հիվանդագին դրության նշաններով (մարմնի նիհարություն, մազերի փշաքաղվածություն, թարախակալած, խոր ընկած աչքեր, ընդհանուր թուլություն, կրծի ուռուցք

ու ամբացում, արտաքին սեռական գործարանները ուռուցք, սեռական գործարանների վրա թե ներսից և թե դրսից պզուկներ ու վերքեր, թարախի ու կեղտոտ լորձուկների ծորում, յետույքի թուլություն, մարմնի վորևե մասի կաթված, փորի ու կրծի վրա ուռուցք, քթի անցքերից ծորում, ծնոտի տակ ուռուցք, վտռքերի ուռուցք, քոս և մարմնի վրա մերկ բծեր) զամբիկներին, առանց անասնաբուժական պերսոնալի թույլտվության, արգելվում է թե ստուգման և թե բեղմնավորման յենթարկել:

63. Յենթե բեղմնակայանի մոտերքում հայտաբերված է արտադրողների և մյուս ձիերի համար վտանգավոր վարակիչ հիվանդություն, այդ դեպքում բեղմնակայանի աշխատանքն անհապաղ դադարեցվում է և կարող է վերսկսել միայն անասնաբուժի թույլտվությամբ:

64. Արտադրող հովտակների հիվանդության դեպքում բեղմնակայանի վարիչը պետք է անհապաղ հայտնի այդ մասին կոլվարչության նախագահին, իսկ պետական բուժարանալին ախտի (ՊԲԱ) հովտակների մասին՝ ՊԲԱ-ի կառավարչին:

65. Բեղմնակայանում հովտակների անկման դեպքում անասնաբուժի, իսկ նրա բացակայության դեպքում՝ անասնաբուժակը, տեղական իշխանության ներկայացուցիչների և բեղմնակայանի վարիչի մասնակցությամբ կատարում են դիտարկություն և կազմում են մանրամասն ախտաբանական-անատոմիական ակտ, վորը ՊԲԱ-ի հովտակների մասին, հիվանդության պատմության հետ միասին ներկայացվում է ՊԲԱ-ի կառավարչին:

Դիակների թաղումը պետք է կատարվի անասնաբուժական պերսոնալի ցուցմունքների համաձայն:

ՀԱՅԿԱՍՏԱՆ ՈՒ ՀԱՐՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

66. Բեղմնակայանի վարիչը գրում է զամբիկների բեղմնավորման ցուցակը (реестр), վորտեղ զբանցվում են բեղմնակայանում ծածկվող բոլոր զամբիկները:

Ցուցակը կազմվում է 2 որինակից—մեկը մնում է կոլտնտեսուկթյունում, մյուսը բեղմնավորման կամպանիան վերջացնելուց հետո ուղարկվում է շրջհոգրաժնին:

Բեղմնավորման ցուցակը պետք կազմվի հատուկ խնամքով և ուշադրութլամբ, վորովհետև ցուցակը հիմնական փաստաթուղթ է հանդիսանում, վորով վորոշվում է սերնդի ծագումը:

Բեղմնավորման ցուցակը կազմվում է յուրաքանչուր հովտակի համար, առանձին:

67. Այն գեպքում, յեթե բեղմնակայանում ծածկվում են մյուս կոլտնտեսուկթյունների և մենատնտեսների զամբիկները, ապա այդպիսի զամբիկները մտցվում են այն հովտակի ցուցակի մեջ, վորով նրանք ծածկվել են և հովտակից հրաժարվելուց հետո միայն զամբիկի տիրոշը (կոլտնտեսուկթյանը, մենատնտեսին) տրվում է վկայական՝ բեղմնավորման մասին:

68. Բեղմնակայանի վարիչը պարտավոր է յուրաքանչուր տանորյակ սահմանված ժամկետներում ներկայացնել շրջհոգրաժնին տեղեկագիր՝ բեղմնակայանում ծածկված զամբիկների քանակի մասին, իսկ ՊԲԱ-ի հովտակների մասին՝ ՊԲԱ-ի կառավարչին:

69. Բեղմնակայանի վարիչը տանում է ծնի հաշվառումն ըստ յուրաքանչուր հովտակի առանձին և ծնի հաշվառման արդյունքներն ուղարկում է շրջհոգրաժնին:



22 ИЮН 1930

464

11

28138

15 409.

НАРКОМВЕТ СССР

ИНСТРУКЦИЯ

по проведению конской случной кампании

СЕЛЬХОЗГИЗ

1930

ЭРИВАНЬ